



**ՀԱՅՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ՝
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՅԱԿԱԼՈՒԹՅԱՆ 16-ՐԴ
ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

1971 թվականի հոկտեմբերի 3-ին, Կիրակի օրը, Մայր Աթոռում, հանդիսավոր իրադրության մեջ և խանդավառ մթնոլորտում, նշվում է Վեհափառ Հայրապետի գահակալության 16-րդ բարեքաստիկ տարեդարձը:

Տանը տարիներ Նորին Սրբությունը իր ուսերի վրա է կրում արժանավորապես և ոգնորիչ արդյունքներով հայրապետական ծանր ու պատասխանատու լուծը իր հոգևոր, եկեղեցանվեր, հայրենասիրական առաքելության խորունկ գիտակցությամբ. «Զի այսպիսի իսկ վայել էր մեզ քահանալապետ» (Երք. Է 26):

Այս տարի, հոկտեմբերի 2-ին, շաբաթ օրը, հայրապետական գահակալության հանդիսավորություններին մասնակցելու համար, Ամերիկայի Միացյալ Նահանգներից Մայր Աթոռ է ժամանում ոխտավորաբար Հայկական բարեգործական ընդհանուր միության հախագահ և Մայր Աթոռի հարազատ զավակ տիար Ալեքս Մանուկյանը իր հարգելի կնոջ՝ տիկին Մարի Մանուկյանի հետ՝ ընկերակցությամբ Հայկական բարեգործական ընդհանուր միության Ամերիկայի Կենտրոնական հանձնաժողովի հախագահ և Մայր Աթոռի հարազատ զավակ Էդվարդ Մարտիկյանի և իր հարգելի կնոջ՝ տիկին Հեղինե Մարտիկյանի, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչության անդամներ՝ դոկտ. Տիգրան Փափազյանի, մեթր Հակոբ Տերտերյանի և հայտնի ազգային բարերար Ստիվըն Մուկարի (Ստեփան Մկրտչյան):

Այս բարեքաստիկ առիթով Մայր Աթոռ էր ժամանել տ. Տիրան արքեպ. Ներսույանը: Գահակալության հանդիսավորություններին մասնակցելու համար,

որպես ԱՄՆ-ի հայոց առաջնորդարանի ներկայացուցիչներ, Մայր Աթոռ էին ժամանել Ֆիլադելֆիայի հայոց և Երրորդություն եկեղեցու հոգևոր հովով տ. Զավեն ծ. Վրդ. Արզումանան ու Ռուտերտառանի հայոց և Հակոբ եկեղեցու հոգևոր հովով տ. Տաճատ քնն. Դավթյանը, Տորոնտոյի հայոց և Երրորդություն եկեղեցու հոգևոր հովով տ. Ժիրայր Վրդ. Թաշճյանը:

Նոյն նպատակով և նոյն առիթով Մայր Աթոռ ուստի էին եկեղեց, դարձյալ ԱՄՆ-ի հայոց առաջնորդարանից, Սառա Յաղուայանը, Տիանա Փիլիպ-պոպանը, տեր և տիկին Հարություն Անտոնյանները, տեր և տիկին Զեկ Անդրեասյանները, Աշոտ Գրիգորյանը, Միրիչան Գիրյանը, տեր և տիկին Դուկուտ. Փեղելյանները՝ որպես Կալիֆոռնիայի հայոց թեմի ներկայացուցիչներ:

Հայոց Հայրապետի գահակալության 16-րդ տարեդարձի համեմատություններին մասնակցելու և Նրա տոնը շնորհավորելու համար Մայր Աթոռ էին ժամանել նաև Անդրին թեմերի թեմակալ առաջնորդները, քահանայական դասի և թեմական-եկեղեցական խորհուրդների ներկայացուցիչները:

Երևանի օդանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, տիար Ալեքս Մանուկյանին և նրա շքախմբի մյուս անդամներին դիմավորում են և բարի գալուստ մաղթում տ. Կոմիտաս և տ. Հովհան եպիսկոպոսները, տ. Ժիրայր, տ. Գեորգ, տ. Աղան Վարդապետները, Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիկյանը:

Օդանավակայանում Մայր Աթոռի հարգելի հյուրերին դիմավորում են նաև Հայկական ՍՍՀ Մինհատրների սպեცիալիստներին առջև եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Մարգիս Գասպարյանը, Սփյուռքահայության հետ մշակութային կամաց կոմիտեի նախագահ Վարդգես Համազապյանը, Կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Անդրանիկ Մարտիրոսյանը և ուրիշներ:

Այնուհետև տիար Ալեքս Մանուկյանը և նրան ընկերակցող հարգելի հյուրերը մեքենաների շարապունով ուղևորվում են դեպի Մայր Աթոռ:

Մայրավանքի արևելյան մեծ դարրասի առաջ մեքենաները կանգ են առնում, և հյուրերը երկրությամբ բարեապաշտությամբ առաջնորդվում են Մայր տաճար՝ իրենց աղոթքն ու ուխտը կատարելու:

Մայր տաճարում լուսարարապետ տ. Հայկագուն արքեպիսկոպոսը ողջունում է բարեպաշտ ուստավորների ժամանումը:

Իջման սուրբ սեղանի առաջ ծննդադիր Ալեքս Մանուկյանը իր աղոթքն ու ուխտն է կատարում:

Այնուհետև հարգելի հյուրերը առաջնորդվում են Վեհարան՝ աջահամբուրով ստանալու համար Հայոց Հայրապետի օրինությունը:

Վեհափառ Հայրապետը սիրով և սրտագին ուրախությամբ ողջունում է պրա. Ալեքս. Մանուկյանի և շքախմբի անդամների ժամանումը Մայր Աթոռ և Էջմիածին:

Սպա Նորին Սուրբ Օծության, տիար Ալեքս Մանուկյանի և մյուս պատվարժան հյուրերի միջև տեղի է ունենում շերմ զրուց՝ սրտագին մթնոլորտում, որին Անդրկա են լինում նաև տ. Հայկագուն, տ. Տիրան, տ. Կոմիտաս, տ. Հովհան սրբազնները:

Տիար Ալեքս Մանուկյանն իր զգացված շնորհակալությունն ու երախտագիտությունն է հայտնում Հայոց Հայրապետին, Նրա հրավերով առաջին ան-

գամ լինելով և Էջմիածին ուստի եկած լինելու և չերմ դիմավորության համար:

Հայկական բարեգործական ընթիւնուր միության մեծահարգ նախագահը իր տիկնոց հետ, պրն. Էղվարդ Մարտիկյանը իր տիկնոց հետ, պրն. Ստիվը Մուկարը, դոկտ. Տիգրան Փափազյանը և մեր Հակոբ Տերտերյանը Հայոց Հայրապետի թանկագին հյուրերն են համարվում:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՉ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 8-ին, կիրակի:

Այսօր Հայոց Հայրապետի գահակալության 16-րդ տարեդարձն է:

Արարատյան դաշտի վրա բացվել է աշնանային հիմաքանչ ու բուրուժավուս առաջին: Բազմահազար ուխտավորների աշխարհախումբ բազմությունը՝ Երևանից, Հայաստանի զանազան շրջաններից, հարեւան եղբայրական հանրապետություններից և պիոնորից՝ ԱՄՆ-ից, Կանադայից, Հարավային Ամերիկայից, Ֆրանսիայից, Խուզիանից, Լիբանանից, Սիրիայից, Ռումինիայից լցուել է Մայր տաճարը, մայրավանքի շրջափակը:

Մայր տաճարի զանգերը հնչում են տոնական ու զվարք:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը, ի գոյս ուխտավորական մեծ խմբի, հանդիսավորապես առաջնորդվում է Մայր տաճար՝ ներկա լինելու հանդիսավոր և պատարագին, որը մատուցում է վրահայոց առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը:

Մայր տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել պաշտոնական հյուրեր:

Ս. պատարագին ներկա են նաև Ալեքս Մանուկյանը իր տիկնոց, Էղվարդ Մարտիկյանը իր տիկնոց հետ և մյուս հարգելի հյուրերը:

Ս. պատարագի նոգեգրավ երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգեցիկ խումբը՝ շնորհալի ղեկավարությամբ Խորեն Մելիսանեցյանի:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Հայր մեր»:

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ավագ սեղան և խոսում իր ներշնչված և նոգելից քարոզներից մեկը, օրիվ հանդիսության և խորհրդի տպավորության ներքո.

ՎԵՀԱՓԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՉԸ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ

«Գիշեր ու ցերեկ առավել ևս աղոյում եմ, որ տեսնեմ ձեր երեսը և կարողանամ լրացնել պակասությունը ձեր հավատքի»:

Սիրելի հավատացյալ ծողովորդ, այս խոսքերը ասել է մեզանից մոտ երկու հազար տարիներ առաջ սուրբ Պողոս առաքյալ, խոսքեր ուղյալ Հայաստանում կազմվող նոր համայնքներից մեկին: Մանոր է անշուշտ ձեզանից շատ-շատերին, թե ով է Պողոս առաքյալ. նա Քրիստոսի Ավետարանի մեծագույն և հզորագույն քարոզիչներից մեկը հանդիսացավ մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի համբարձումից հետո, երբ նա այլևս չկար աշխարհում, սակայն կային նրա աշակերտները, որոնք կոչվեցին առաքյալներ, և որոնք շրջեցին երկրից երկիր, աշխարհից աշխարհ, այն ժամանակվա քաղաքակիրք երկրամասերուն, հատկապես Միջերկրական ծովի ավազանի շուրջ գտնվող երկրներում: Նրանք ամեն տեղ տարան և ցանեցին նոր Ուխտի, ճշմարիտ հավատքի սերմերը: Այդ առաքյալներից ամենանշանավորը յուր գործով,

հանդիսացավ հենց ինքը Պողոս առաքյալ: Հիմ աշխարհը, հումա-հոտմեական աշխարհը իր փառքի օրերը ապրելուց հետո, և սքանչելի քաղաքակըրթություն մը, մշակույթ մը մարդկության ընծայելուց հետո, տկարացավ, աղասերվեց և կամաց-կամաց սկսավ փու գալ իր հիմքերից: Շուրջ երկու հարյուր տարիների ընթացքում կատարվեց պատմական այս ընթացքը, այս պրոցեսը, և փու եկած այդ աշխարհի մասնիկներով, փշոված քարերով, միավորվեց, վերակառուցվեց մի նոր աշխարհ, Քրիստոսի Ավետարանի շաղախով: Այդ պատմական մեծ գործը կատարողներից առաջինը կարող ենք նկատել Պողոս առաքյալ: Այն թղթի մեջ, այսինքն այն գրության մեջ, որ նա ուղղում է, առաջին դարում Հովհաննանի նոր կազմվող համայնքներից մեկին, նա խոսում է նաև նրանց տկարությունների մասին, որովհետև ամեն գործի սկզբանվորության անշուշտ որ լինում են թերություններ, խարիսխումներ, շփոթ վիճակներ մարդկային այլազան տկարությունների հետևանքով: Նույնիսկ պառակտումներ և ներքին հակամարտություններ, նույնիսկ թշնամություններ ինչպես պատահեց այդ քրիստոնեության զարգացման առաջին այդ շրջանին: Դա պետք է նկատել օրինաչափ երևոյթ: Եվ առաքյալների դերը և գործը եղավ ուղղել այդ բոլոր թերությունները կամ ինչպես Պողոս առաքյալ այս դեպքում ասում է: «Լրացնել պակասությունները նրանց հավատքի»: Այսպես ահա, սիրելի ժողովուրդ, քրիստոնեությունը հետզինեւ ամրացավ, ուրքի կանգնեց և հիմ աշխարհի ավերակների վերա բարձրացավ քրիստոնեական նոր աշխարհը, որի պատմությունը մեզ, ձեզ բավականաշափ հայտնի է: Այդ պատմության մեջ մեր ժողովուրդը ևս իր պատվավոր տեղը ունի, մասնավոր, երեւ հիշենք ու երբեք չմոռանանք թե առաջին քրիստոնյա ժողովուրդներից մեկը հանդիսացավ ինքը հայ ժողովուրդը: Դա համարում ենք մենք մեզ համար պարծանք աշխարհի բոլոր ժողովուրդների առաջ, ինչպես երեկ, նույնպես այսօր, նույնպես վաղը և հավիտյան:

Սիրելի ժողովուրդ, Մենք ուզում ենք շարունակել Մեր խորհրդածությունները այս անգամ կանգ առնելով մեր եկեղեցու և մեր ժողովուրդի պատմական ճակատագրի վրա: Վերջին շրջաններին մեր ժողովուրդի հետ միասին մեր եկեղեցին էլ բազում ողբերգական տարիներ ապրեց մինչև ոչ հետու, քան հիսուն-վաթուն տարիներ առաջ: Դաժան և մոռայ դարերի այդ շրջանը սակայն հայ ժողովուրդը հաղթահարեց և դուրս եկավ լուս աշխարհ և գորեն հրաշքի համազոր պայմանների մեջ վերածնվեց յուր պատմական հայութեանի հողի մի մասի վրա: Նա վերածնվեց իբրև ազգություն և իբրև ազգային պետություն, որի հովանու ներքո ապրում ենք մենք այսօր: Հայ ժողովուրդը նոր ճակատագիր ստեղծեց իր համար, եղբայրացած ժողովուրդների մի մեծ ընտանիքում, մի ընտանիք հառաջադեմ և հզոր, որի մեջ նա գտավ յուր կյանքի անվտանգությունը, յուր հառաջիմության պայմանը, իր կյանքի իսկ պայմանը և որու հովանու ներքև վերածնունի ճանապարհի վրա, մենք հավատում ենք թե մեր ժողովուրդը անելով ու զարգանալով հետզինեւ, քայլ առ քայլ պիտի կարողանա արձանագրել նոր հաջողություններ կյանքի բոլոր բնագավառներում ու պիտի կարողանա նույնպես քայլ առ քայլ կենսագործել իր բոլոր ազնիվ և արդար իդեալները: Պատմական և բախտորոշ այս իրադրության մեջ նոր կյանքի կոչվեց և գրության նոր հմատ ստացավ նաև Հայաստանաց առաքելական սուրբ եկեղեցին, որովհետև կասկած չկա, վկայում է այդ մեր ամբողջ պատմությունը, թե հայ եկեղեցին երբեք անբաժան մաս չի եղել հայ ժողովուրդի ծոցում, այլ միշտ միատեղ անել ու զարգացել



Անհայտա Հայրապետը և տիար Ավերս Մամոկյանը Նոր Վեհարանի բակում,
խաչքարի առաջ

Դարերի ընթացքում: Ահա այսպիսի պատմական մի պահ ենք ապրում նաև մենք այսօր. ճիշտ է մենք տակավին բազում տկարություններ ունենք իբրև եկեղեցի, տակավին բազում սպասելիքներ, սակայն ամեն բանից վերև և կարևորն այն է որ մենք իբրև եկեղեցի ապրում ենք, գործում ենք, ոգևորվում ենք, ոգեշնչվում ենք, և աշխատում մեր վերածնված ժողովրդի ծոցում, լավատեսությամբ մեր հայացքն ուղղած դեպի ապագան: Բոլոր համեմատությունները պահեղով, հատկապես Մեր տկար անձի առնչությամբ, կարծում ենք որ Պողոս առաքյալի խոսքը կարող ենք պատշաճեցնել նաև Մեր պարագային ու Մեր օրերին: Ամենայն Հայոց կաթողիկոսը աղոթում է ու գործում իր հավատարիմ գործակիցների հետ միասին որպեսզի Մենք հետզհետեւ

տեսնենք երեսը մեր ժողովրդին, մեր ժողովրդի ամեն մեկ զավակին որ ի Հայաստան և ի ափյուս աշխարհի և լրացնենք այն պակասները, այն թերությունները որ տակավին կան մեր եկեղեցու մեջ:

Ահա այս մտածումի մեջ կարող ենք խուացնել Մեր գործի իմաստը տասնվեց տարիներ հետո այն օրվանից, եթե Աստուծո ողորմությամբ Մեր համեստ անձը կոչվեց Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնին: Այս տարիների ընթացքում Մեր ճիգը և Մեր տեսիլը եղավ վերաշննել Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը իրեն սրբավայր, իրեն համագոյացին սրբավայր և իրեն պատմական հյութեղեն կոթող: Երկրորդ՝ Մեր ճիգը և տեսիլը եղավ և ի՝ վերաշննել, պայծառացնել, իմաստավորել սուրբ Էջմիածինը իրեն ոգեղեն կոթող մեր ժողովրդի զավակների գիտակցության մեջ, հոգու մեջ: Թե ինչ-քան հաջողվեց Մեզ այդ, մեր ժողովուրդը՝ դուք պետք է դատեք: Մենք մսի-թարգած ենք սակայն այն զգացումով, որ ճիշտ ճանապարհի վրա ենք գրտ-նըկում և որ մեր ժողովուրդը իր ընդհանուրության մեջ առած, Մեզ լավ հաս-կացավ և իր երեսը դարձեց դեպի սուրբ Էջմիածին թե՛ հայրենիքում, թե՛ արտասահմանում, որտեղ որ մի հայ սիրտ, մի ճշմարիտ հայ քրիստոնյացի սիրտ բարախում է:

Մի օրինակ տպու համար հիշենք, թե անցյալ տարի մայիս ամսին երբ գտնվում էինք Միլան քաղաքում, դեպի Հռոմ մենակուուց առաջ, Մեզ տեսու-թյան եկավ Թերթանի թեմական խորհրդու նախագահը, մի պատկառելի, լուրջ անձնավորություն, որ առաջին անգամ իր կյանքում տեսնում էր Ամե-նայն Հայոց Հայրապետին: Նա, այդ մոտ յոթանասուն տարեկան մարդը, շա-տերի ներկայության, համարյա դողալով և արտասուրը իր աշքերում բացա-կանչեց. «Վեհափառ, ամեն մի պարսկահայ խաչակնքելիս իր երեսը դարձ-նում է դեպի սուրբ Էջմիածին»:

Այս է ճշմարիտ զգացումը համայն հայության: Երանի թե նաև այն փոր-րապեիվ հայերը, որոնք ինչ-որ տարբեր ակնոցներ դրած իրենց աշքերին, չեն կարողանում պայծառ իրողությունը տեսնել, երանի թե նրանք էլ իրենց այդ ակնոցներից ազատվեին ու զային իրենց երեսը դարձնեին դեպի լուս Էջ-միածին:

Սիրելի հավատացյալներ, դուք որ այսքան մեծ թվով հավաքվել եք հենց սուրբ Էջմիածնի տաճարի կամարների տակ, անտարակուս Մեզ շատ լավ եք հասկանում: Մենք հուզումով դիտու ենք ձեր երեսները: Ձեզ հայաստա-ցիներ և ձեզ արտասահմանից եկած Մեր հոգեւոր զավակներ, տեսնում ենք ձեր դեմքերի արտահայտությունները, ձեր հոգեւոր ուրախությունը: Ոգեշնչված եք բոլոր այն զգացումով, որով Մենք էլ աշխատում ենք պատեղ՝ իրեն Հայ-րապետ՝ Մեր պարտք կատարել Աստուծո և մեր ժողովրդի հանդեպ:

Ողջունում ենք ձեզ բոլորի և բաշխում ձեզ Մեր օրինությունները՝ ձեզ հայաստանցիներ և ձեզ հոգեւոր եղբայրներ և ձեզ ոլխավորներ և հյուրեր, որոնք եկել են հեռու աշխարհներից: Աղոթում ենք առ Աստված, որպեսզի մեր սուրբ եկեղեցին իր համայն հավատացյա ժողովրդով ապրի խաղաղ և աստվածահանո կյանք՝ հետզհետև ամրապնդելով իր հոգեւոր կյանքի հի-մունքները: Դուք արտասահմանցի Մեր զավակներ, տարեք Մեր ողջույնը և օրինությունը նաև հեռու այն երկրները, որտեղից եկել եք: Պատմեցեք բոլո-րին, հրավիրեցեք բոլորին և կոչ արեք բոլորին, որ ամենքը անխտիր առանց բացառության դարձնեն իրենց երեսները դեպի սուրբ Էջմիածին, որպեսզի Մենք մոտիկից տեսնենք, զգանք ներկայությունը բոլոր նրանց, բոլոր Մեր



ՄԱՅՐԻ ԱԹՈՌԻ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ Ս. ԳԵՂԱՐԴԻ ՎԱՆՔՈՒՄ

գավակներին և միացյալ ուժերով, մեր ճշխրապետական Աթոռությունների գործակցությամբ, Մեր հոգևոր եղբայրների գործակցությամբ, մեր հասարակական գործիչների աշխատակցությամբ կարողանանք Մեր առաքելությունը շարունակել, այս փառավոր առաքելությունը, որ Մեզ ժառանգություն մնաց հեռավոր դարերից, սուրբ Գրիգոր Լուսավորչից մինչև մեր օրերը:

«Տէր Աստուած, բագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա և զեղբայրութիւնս մեր ամբողջ և անխով այժմ և համիտեանս: Ամեն:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Ավագ սեղանի առաջ, աւոյանում, կատարվում է հայրապետական մադլանք՝ գահակալության 16-րդ տարեդարձի առիթով:

ԾՆՈՐՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Մայր տաճարում արարողությունների ավարտից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով, երգով ու խնկով ու ժողովրդական խանդավառ արտահայտությունների ներք առաջնորդվում է Վեհարանի գահարան՝ օրվա սոնի առիթով ընդունելու համար շնորհավորությունները:

Հոգևորականաց դասը, հյուրերն ու ուստավորները տեղեր են գրավում շքեղ գահարարում:

Գահարարում են նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը, Խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննեայանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, Կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Ս. Մարտիրոսյանը:

Հայոց Հայրապետը բազմում է իր գահի վրա:

Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկագուն արքեպ. Աբրահամյանը, հանուն հայ եկեղեցու լրության, Մայր Աթոռի միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդի, սրտառուց բարեմադրություններով շնորհավորում է Հայոց Հայրապետի գահակալության տարեդարձ՝ շեշտելով, որ աղոթքի, աշխատանքի, կառուցումների, հաջողությունների ու դժվարությունների մեջ անցած 16 տարիների իրենց ոգևորիչ արդյունքներով «երազային ամբողջ կյանք մը կրովանեակին իրենց մեջ, ի հաստատություն Մայր Աթոռի, ի պայծառություն հայ եկեղեցին, ի բարօրություն հայրենյաց և հայ ժողովոյի»:

Այնուհետև Հայոց Հայրապետի գահակալության 16-րդ տարեդարձը շնորհավորում է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգսի Գասպարյանը հետևյալ բովանդակալից ճառով.


ՊՐ. ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԺԱՌԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

«Զերդ Սրբություն,

Գերաշնորհի հայրեր և պատվարժան հյուրեր,

Այսօր ինձ վրա հաճելի պարտականություն է դրված Հայաստանի կառավարության, հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից շերմորեն ողջունել Զեզ՝ Զեր գահակալության 16-րդ տարեդարձի առթիվ, կամենալ Զեզ բաջառողջություն, կորով, երջանկություն և առաջիկա տարիների ընթացքում՝ նոր շինարար աշխատանք ու հաջողություններ:

Մեր հայրենիքը անցյալ տարի բոլորեց իր պետական գոյության 50-րդ տարին, և պատմական այն վերափոխումները, որոնք իրագործվեցին այդ 50 տարիների ընթացքում, վկայությունը տվեցին մեր ժողովրդի ստեղծագործական հանձնարի ողջ ոժի, խորհրդային կարգերի ընձեռած անսպառ հնարավորությունների: Կես դար անդադրում կառուցեցինք, ստեղծեցինք հոգևոր ու հյութական մեծ արժեքներ, հարստացրինք մեր դարավոր մշակույթի գաճարածք: Ասում են, ժողովորդներին գնահատում են ոչ միայն այն պատճառով, որ նրանք ինձ են, այլև այն պատճառով, որ նրանք չեն հնանում: Մենք այսօր




Հին Վեհարանի վերանորոգված արևմտյան ճակատը

կարող ենք ասել, որ մեր հինավորց ժողովուրդը այժմ ավելի քան երեսիցն իր բազմադարյան պատմության մեջ լի է երիտասարդական կորովով ու եռանդով, ընդունակ ու պատրաստ նոր պատմական սիրանքների: 50-ամյակից հետո Խորհրդային Հայաստանը արձանագրեց նոր հաջողություններ և քաղաքամայր Երևանում, և՝ Լենինականում ու Կիրովականում, և՝ մյուս քաղաքներում ու շրջաններում: Ավելի գեղեցկացավ Երևանը, նրա բոլոր թաղամասերը, բարեկարգվեց նոր Զելյունը, նոր Կիլիկիան, նոր Մարաշը, նոր Արարկիոր, այժմ արդեն՝ նոր Սյունիքը և բազմաթիվ այլ ավաններ:

Այս ամենը ես հիշատակում եմ՝ հաստատելու համար այն պատմական ճշմարտությունը, որ անցյալ տարիներին մենք կյանքի կոչեցինք Արևմտյան Հայաստանի բազմաթիվ քաղաքներ ու ավաններ խորհրդանշող բնակավայրեր:

Ես համոզված եմ, որ այս հաջողություններով, Զերդ Սրբություն, Դուք ապրում եք, ուրախանում, նաև բերում Զեր մասնակցությունը: Դժվար է թվարկել մեր հայունիքի նույնիսկ մեկ տարվա ընթացքում ձեռք բերված հաջողությունները: Ես այդպիսի նպատակ իմ առաջ չեմ դնում: Նշեմ միայն,



Հին պետական թաղապահ Դավիթը


որ այս տարի մենք շահագործման հանձնեցինք ժողովրդական տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող շատ կառույցներ, հազարավոր բնակելի շենքեր, դպրոցներ, ակումբներ, Արփան ավելի մոտեցավ Սևանին։ Կողենայի հիշատակել, որ այս տարի Հրազդանի փեղարին, նոր Կիլիկիայի մոտ, շահագործման հանձնվեց նոր մարզադաշտը, որ կարող է պատիվ բնույթի աշխարհի որևէ երկրի, որևէ մայրաքաղաքի։ Բավական է ասել, որ այդ մարզադաշտը կարող է տեղափորել երկու և կես անգամ ավելի մարդ, քան 1920 թվականին ապրում էր Երևան քաղաքում։ Այսօր, այս հանդիսավոր առիթով ես կկամենայի նշել նաև այն մեծ աշխատանքը, որ Դուք կատարեցիք անցյալ տարիների ընթացքում։ Էջմիածնի Մայր տաճարը իր շրջափակով արդեն ստանում է իր բարեկարգման վերջնական կերպարանքը։ Այստեղ ներկա գտնվող գերաշնորհ հայրերը և արտասահմանից եկած մեր հյուրերը, մեր բնաշխարհի մարդիկ հիշում են, որ 1954—1955 թվականների ընթացքում պետական միջոցներով վերանորգվեց Էջմիածնի Մայր տաճարը, որպես Սովորական Միության նօրմակի կանոնու հուշարձան։ Հետագա տարիների ընթացքում Զեր ջանքերով, Զեր գործակիցների ջանքերով՝ շատ աշխատանք կատարեցիք, որպեսզի պարտվի Մայր տաճարի բարեկարգությունը։ Շատ աշխատանք էր պահանջվում, որպեսզի, բացի Մայր տաճարից, բարեկարգվեն տաճարի շրջակայքն ու մոտակա հուշարձանները։ Այժմ դրանք պահպանվելու վրա են։

Այդ ամբողջ աշխատանքի մեջ, Զերդ Մրբություն, միշտ եղել է, կա ու կլինի Զեր անձնական ձեռքը։ Սակայն սխալ կլիներ Զեր գործունեությունը շրջափակել միայն Էջմիածնով։ Հետագա տարվանից սկսած այն դուրս եկավ Էջմիածնի շրջանակներից, տարածվեց սիլուորում, միջազգային նշանակություն ունեցավ։ Ես կուգենայի մի առանձին ուժով ընդգծել այն ջանքերը, որ Դուք գործադրեցիք խաղաղության պաշտպանության ամրապնդման ասպարեզում Զեր խորով ու գործով։

Անցյալ տարիները նշանավորվեցին արտասահմանի և հայրենիքի կապերի հետագա ընդլայնմամբ։ Եվ որքան պատմության ժամացույցը իր սաքը տանում է դեպի առաջ, այնքան ավելի են ամրապնդվում մեր կապերը հայրենիքի և գաղթաշխարհի միջև։ Այդ ամենը տեղի է ունենում մեր ժամանակի տրամաբանությամբ։ Այժմ ավելի քան երբեք պարզ է դառնում, որ սիլուորը չի կարող որևէ նշանակալից գործ կատարել իր իսկ համար՝ առանց հենարիան ունենալու մայր հայրենիքը։ Ես ուրախ եմ նշելու, որ մեր սիլուորահայ ժողովրդի գոյատևման պայքարի մեջ Դուք, որպես Ամենայն Հայոց կաթողիկոս, բերեցիք Զեր նշանակալից աջակցությունը Զեր խորով, Զեր ուղևորություններով, Զեր քարոզներով և Զեր հեղինակությամբ։ Զափազանց համեմի է նշել, որ Զեր գահակալության 16-րդ տարեդարձին նվիրված հանդիսությանը ներկա է սիլուորի անվանից գործիչներից մեկը՝ Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ պարուն Ալեքս Մանուկյանը հետևալ ոգեշունչ ու հայրենասիրական ճառով։

Այս զգացումներով, Զերդ Մրբություն, ես կրկին կամենում եմ Զեր քաջառողջություն և նորանոր հաջողություններ հայրենասիրական գործերի մեջ»։

Հայոց Հայրապետի գահակալության բարեքաստիկ տարեդարձը շնորհավորում է նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության մեծահարգ նախագահ տիար Ալեքս Մանուկյանը հետևալ ոգեշունչ ու հայրենասիրական ճառով։



ՊՐ. ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԺԱՌԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

«Վեհափառ Հայր,
Պարոն Սարգիս Գասպարյան,
Գերաշնորհ, Բոգեշնորհ և արժանապատիվ հայրեր,
Մեծամարգ հյուրեր, սիրելի հայրենակիցներ,


Ուղախության և երջանկության արիթմետ ունեցած եմ կյանքիս ընթացքին, բայց այն ուղախությունն ու երջանկությունը որ կզգամ այսօր՝ բացառիկ է իր տեսակի մեջ և իր իմաստով: Այսօր կգունվիս իմ սեփական հայրենիքիս մեջ, իմ պապերու դարավոր հողին վրա, և այդ հողին ամենեն արքացան մեկ մատունքին, այդ հողին սիրտին՝ Էջմիածնի մեջ: Եվ այս մեծ բախտին համար՝ ես Բոգելին երախտապարտ եմ Աստուծո, և նաև մեր անձնան ժողովորդին, ինչպես նաև Էջմիածնի անզուգական Գահակալին՝ Վազգեն Առաջին Հայրապետին:

Հետաքրքրություններուն և պաշտոնիս բերումով՝ ես հաճախ պատեհությունը ունեցած եմ այցելելու մեր հայաշատ գաղութները՝ ըլլալու հայրենակիցներու հետ, բաժնեկից դատանու անոնց հրճվանքին, և ինչու չէ՝ անոնց մտահոգություններուն նաև, հպարտանալու անոնց նվաճումներով, և հոգվելու՝ անոնց անապատ հայրենասիրության և ազգափրության ի տես: Հայ ըլլալը եղած է կյանքիս ամենեն մեծ արժեքներն ունեկը, եղած է կորիզը իմ երազներու, ինչպես նաև զիս աշխատանքի մողղ ներքին ուժին և կորովին: Ոչ մեկ ատեն եղած եմ ավելի ազատ և որպան՝ քան երբ գտնված եմ հայրենակիցներու շրջանակին մեջ, երբ մտածած և երազած եմ հայության մասին, երբ ձգուած եմ կարելիս ընել՝ երկարելու համար հայրենակիցներու: Հայ ըլլալը իմաստ և տարողություն տված է կյանքիս, հարըստացուցած է Բոգիս, ինձի ներշնչած է հավատք և կամք, ու զիս առաջնորդած է դիմագրավելու նորանոր դժվարություններ՝ նորանոր իրագործումներու ի խնդիր:

Հայ ըլլալը զիս զորացուցած է նաև որպես անհատ, որպես մարդ արարած՝ որովհետն պատճառ եղած է որ ավելի և կյապված զգամ կյանքին և մարդոց, ավելի և ս փարիս մարդկային և մարդկայնական արժեքներու, ավելի և ս պատկանիս այս աշխարհին և մասնակից անոր բարելավումն համար կատարվող աշխատանքներուն՝ իմ կարողություններու սահմանին մեջ անշուշտ:

Բայց պետք է ըստ որ հայության զգացումիս մեջ, որպես հայ իմ պատկանելիության մեջ՝ միշտ ներկա եղած է հայ հավատքը, հայ եկեղեցին՝ իր շքեղ անցյալով, իր հերոսական մարտնչումներով, իր անշափելի նվիյումներով և զոհողություններով, իր անթիվ մարտիրոսացումներով՝ թե՛ որպես կրոնքի և հավատքի միջնարերդ, և թե՛ որպես Բոգելան սովոր մեր ժողովորդին, անոր Բոգելան ապատարանը:

Հայություն և հայ եկեղեցի միշտ անքածան եղած են ինձի համար, և նիշտ այս անքածանելիության մեջ հաճախ գտած եմ գաղտնիքը՝ զիս զորացնող, կյանքիս իմաստ տվող ուժին: Եվ միշտ՝ երբ ուզած եմ խոսիլ նախանիքներուն հետ՝ հայկական շարականներու մեղեղին փայփայած է զգացումներս, երբ ցանկացած եմ հավատքիս լեզվով հարաբերի տիեզերքի ոգիին հետ՝ բառերս եղած են հայերեն, աղոթքներս՝ հայադրոշմ: Հայ Աստված մը միշտ գոյություն ունեցած է ինձի համար ամեն պատարագի ատեն, և ամեն աղոթքի ընթացքին, և նոյն ժամանակ՝ կրոնաշունչ ու խորհրդավոր մրմունց մը ընկե-



Հինգ վեցամյակի արթուրական տառած

բացած է բոլոր հայկական երգերուն, և ճիգի ու աշխատանքի ազգային բոլոր հնգերուն:

Ու հիմա, կեցած սուրբ Էջմիածնի հովանիքն Աերքն, Հայաստանի հողին վրա՝ ևս ինքանքու կզգամ ավելի լիամբողջորեն հայ, ավելի հարազատորեն քրիստոնյա, ավելի մարդկանորեն մարդ՝ քան հավանաբար երբեկցին իմ ամբողջ կյանքին տևողության:

Սփյուռքը յուրահատուկ աշխարհ մըն է, աշխարհ մը, որ իր կարգին բաժնը վագած է յուրահատուկ մասերու, որոնք հաճախ տարրեր են իրարմեն՝ իրենց ընկերային, նյութական, հոգեբանական կացությամբ: Աշխարհներու տարտղնաված խումբ մըն է սփյուռքը, և հայությունը կազմված է մեծ թե փոքր բնկորներն, որոնցմեն ոմանք կաճին, և որիշներ կհալին, կդժգունին, կոգևարին: Տեղաշարժ մը նշմարելի է սփյուռքահայության կյանքին մեջ՝ հատկապես վերջին 10—15 տարիներուն, և հավանաբար այս տեղաշարժն է գիտավոր պատճառներն մենքը հայկական գաղութներն ներս տեղի ունեցող թվական և այլ փոփոխություններու: Ամերիկաներու և Կանադայի գաղութները, օրինակ, այսօր կհաշվեն հավանաբար ավելի քան 400.000 հայ, և այս թիվը կաճի հարատևորեն՝ տրված ըլլալով որ տարեկան մոտավորապես 10.000 հայեր կգաղորեն Նոր աշխարհ՝ Միջին և Մերձավոր Արևելքն առավելաբար՝ ըստ կարգ մը աղբյութներու: Ու եթե ովենք արագ ակնարկ մը նետել արտասահմանի վրա՝ կրնանք ըսել թե Լիքանանի, Իրանի և Ամերիկայի—Հյուսիսային, Հարավային և Կանադա—հայ գաղութներն են հատկապես որոնք կաճին կամ առնվազն կպահպանեն ազգային նկատառելի կենդանություն մը, մինչ մյուսները, մեծ մասով, կկորուսնեն իրենց կենաունակության թափը, կդանդաշեն, կքիմ՝ հակառակ ի գործ դրված բոլոր ճիգերուն:

Ինչ որ սակայն արժանի է լուրջ ուշադրության և մեր սիրտերը կլեցնեն բերկրանքով և լավատեսությամբ՝ արտասահմանի բոլոր գաղութներն ներս նշմարվող այն վիթխարի և ընդհանուր ճիգն է՝ պաշտպանելու մեր ինքնությունը, արժեորելու մեր մշակույթը, տնակամացնելու մեր գոյությունը որպես առաջավոր ժողովորդ: Մեղվածն և լայնածիր աշխատանքի մըն է լծված հայ ժողովորդը արտասահմանի մեջ՝ վասն իր գոյատևումին, նույնիսկ այն գաղութներուն մեջ, որոնց ապագան կնկատենք անմիջականորեն մտահոգիչ: Սփյուռքը հաստատ կմնա իր ապրելու նույն որոշումին վրա, և պետք է ըսել՝ կատարված ճիգերեն շատերը կուտան իրենց շոշափելի արդյունքը: Լիքանանի ազգային կյանքը եռուն է ուշագրավ ըլլալու աստիճան, Իրանի հայ գաղութը կպահեն իր ազգային գոյությունը՝ ապրեցնելով իր հաստատություններու ու եկեղեցիները, ամերիկահայ գաղութներն Կանադան արդեն ունի իր եկեղեցիները, ակումբները, և բացած է իր առաջին դպրոցը, Հարավային Ասերիկան որ արդեն ուներ դպրոցներ՝ կրողրե ազգային կյանքի եռուգեռու շրջան մը, իսկ Միացյալ Նահանգներու հայ գաղութը կապրի ազգային գիտակցության անհախներաց զարթոնք մը՝ կրթական, ընկերային և եկեղեցական մարզերուն մեջ հավասարապես: Հոն ունինք ավելի քան 100 հայկական եկեղեցիներ, որոնցմեն ոմանք սքանչելի տաճարներ են. այդ եկեղեցիներուն կից ունինք մեր մշակութային սրահները և կիրակնօրյա վարժարանի դասարանները, որոնցմեն ոմանք նախանձելի ըլլալու աստիճան արդիական ու գեղեցիկ են. ունինք արդեն ուրեմն հայկական ամենօրյա վարժարաններ, երեքը դեռ սկզբնական վիճակի մեջ, բայց հինգը, արդեն հաստատված. ունինք հայագիտական դասընթացքներ թիվով շորջ տասը՝ երկրին ամենեն անվանի հա-

մալսարաններուն մեջ: Ունինք օրեօր ստվարացող և ճշխացող մամուլ: Ունինք երգի և պարի համուլթոներ, որոնք հայ պարին նազանքը ու հայ երգին կենսավետ քնքությունը կտանին ծագն ծագն:

Հայ կուգեմ՝ նաև Միացյալ Նահանգներու մեջ՝ հայությունը ձեռնամուխ եղած է ազգային ինքնապաշտպանումի վիթխարի աշխատանքի մը՝ օգտվելով երկրին տրամադրած ընկերային, հյութական և մարդկային անհաջիկ դուրսություններնեւ:

Այս կապակցությամբ՝ կիափագիմ նշել թե՝ ՀԲԸՄ-ը, որուն նախագահը ըլլալու պատիվը ունի՞ ազգապահպանումի կարևորագույն գործուներն մեկն է արտասահմանի: Անկախ այն ընկերային, կրթական, մշակութային և մարդասիրական բազմամյա ծառայություններն, որ մեր Միությունը մատուցած է և կշարունակե մատուցանել արտասահմանի մեր ժողովուրդին՝ ան առաջնակարգ դեր կետատարե նաև ամերիկահայ գաղութներու ինքնապաշտպանության աշխատանքին մեջ: Որպես երկու նոր և մեծ իրագործումներ՝ ՀԲԸՄ-ը հաստատեց հայկական ամենօրյա վարժարաններ, և կազմակերպեց երգ ու պարի համույթներ՝ մտնելով բարոյական և հյութական հսկա հանձնառություններու տակ: Ամենօրյա վարժարանները թիվով երեք, Դեստրոյու, Ուսուերտառուն և Մոնթեալ, իսկ երգ ու պարի համույթները թիվով վեց՝ վեց գլխավոր քաղաքներու մեջ՝ եղան և կշարունակեն ըլլալ ազգային զարթոնքի և համարավառության խոշրագույն աղբյուրներ:

Կըսեմ՝ արտասահմանը՝ ընդհանրապես, և կարգ մը գաղութներ հատկապես՝ փարած են ազգային գոյատևումի աշխատանքին և կընեն իրենց կարելին այդ ուղղությամբ՝ հակառակ որոշ համայնքներն ներս նշանարկող հյուծումին, ուրիշներու մոտ հաստատվող անդամալուծության, ավելի ուրիշներն հասնող հոգեկարգի տնօքցին:

Այսօր կա սիյուռքը: Եվ այդ սիյուռքը արդյունք է անհաջիկ գործողություններու, անշահելի տքնանքի, անհուն սիրու և անսահման հայրենասիրության: Եվ այս բոլորը կարելի այսի չըլլային շատ հավանաբար և հիմնական իմաստ մը պիտի չստանային՝ եթե գոյություն չունենար Հայաստանը և եթե Հայաստանի հովանակին ներքև չաճեր և չունանալու սուրբ Էջմիածինը՝ մեր հավատքին ու հոգիին դարավոր մայրաքաղաքը: Մեր ճիգերը, մեր գործողությունները, մեր երազները վերջնական հշանակություն կստանան մեր հայրենիքին գոյությամբ և մեր հավատքին ծաղկումը՝ շնորհիլ այդ հայրենիքին:

Քրիստոնեությունը, ինչպես ըստ՝ մեզի համար եղած է անբաժանելի մեկ մասը մեր գոյության թե՝ որպես մշակութային հավաքականություն և թե՝ որպես ազգություն: Արդարն, մեր ամրող մշակույթն ու դպրությունը եղած են գործը կրոնականներու: Մեր ստեղծած քաղաքակրթությունը ամրող կրած է դրոշմը մեր կրոնքին և հավատքին: Մերուպը, Նարեկացին, Սայաթ-Նովան ու Կոմիտասը, թվելու համար քանի մը անուն միայն, եղած են կրոնականներ: Հայկական ճարտարապետությունը, որ փառքերն է մեր մշակույթին՝ եկեղեցական է: Նույնիսկ մեր քաղաքական կյանքին ամենեն գործու և կարելու առաջնորդներն շատերը պատկանած են կղերական դասին: Եվ այսօր տակապին, հատկապես սիյուռքի մեջ՝ մեր եկեղեցին կշարունակե ըլլալ ամենեն կարևոր ազդակներն մեկը մեր գոյության՝ որպես ժողովուրդ և մշակութային հավաքականություն: Ահա թե ինչո՞ւ սուրբ Էջմիածինը անհունորդն թամկագին է մեզի համար, ահա թե ինչո՞ւ հոգին ցանկացող ենք որ բարգուվանի ու գորանա ան, ու շարունակե ըլլալ մեր հոգիներն ու սիրտերը դե-



Տիար Ալեքս Մանուկյանը կտրում է Հին Վեհարանի մուտքի ժապավենը

ափ հայրենիք, դեպի Երևան քաշող և անոր կապող մագնիսական ուժը, ոք շարունակէ ջերմություն և կորով սփռել արտասահմանի հայ զանգվածներուն հոգեկան կյանքեն ներս, և զանոնք կազդուրե, անոնց տոկունությունը ամրապնդէ: Հայրենիքին իրականությունը և սուրբ Էջմիածնի հոգեպարար գոյությունը երկու գլխավոր կովաններն են, որոնցմով հզորացած՝ մեզ կզգանք առնչված մարդկային պատմության և անոր ներկան կազմող ժամանակներուն: Հայրենիքին, և անոր գիրկին մեջ ծաղկող մեր հավատքին շնորհիվն է որ կդադրինք բեկորներ ու սուլկական համայնքներ ըլլալե, և կդառնանք ժողովուրդ: Անոնց շնորհիվ է որ կգտննենք անհրաժեշտ ուժն ու

արիությունը տոկալու մեր անհայրենիք կյանքին դժվարություններուն և վառ պամելու մեր ինքնավստահությունն ու հավատքը:

Խորապես որպես եմ որ Հայաստանի առաջնորդները՝ գիտակ Էջմիածնի անսահման նշանակության մեր ժողովուրդին համար՝ ստեղծած են անհրաժեշտ պարմանները՝ որ ազատութեան ապրի ու զորանա ան և կատարեն իր պատմականորեն կենսական դերը նաև նոր ժամանակներու մեջ: Առողջ ու բարգավաճ Էջմիածնին մը՝ անփոխարինելի ուժ մըն է արտասահմանին հանար, ինչպես որ իր կարգին՝ առողջ ու բարգավաճ արտասահման մը՝ նկատուելի ուժ մըն է Հայաստանին և Էջմիածնին համար: Հայ ժողովուրդը մեկ է, և այդպես պետք է մեա՝ ի փառ մեր հայրենիքին, մեր հավատքին և մեր գոյության՝ որպես մարդեր:


Ուրեմն կը սեմ.—Սիհյուռքը կա՛, և եթե չսպասված անակնկալներ չգան փոխելու շարքը լիներային և քաղաքական իրադրություններու՝ պետք է ենթադրել թե սիհյուռքը իր գոյությունը այսի շարունակե տակալին՝ բազում տասնամյակներով, և այս նաև՝ շնորհիվ Հայաստանն ստացվող մշակութային ու ոգեկան աջակցության ու քաջակերանքին: Արդարն, իսկական թերկրանք է հաստատելը թե Հայաստանը հասած է այնպիսի դիրքի մը, երբ ալ կրնա հսկայական գումարներ ծախսել ամեն տարի սիհյուռքի մշակութային և նոգեկան կարիքներուն համար: Ասիլյա քացանիկ երևույթ է մեր պատմության մեջ, և մեր սիրտերը կլեցնե անհուն հապատությամբ:

Արդ, եթե պիտի ապրի սիհյուռքը՝ էական է որ ընենք մեր ամրող կարելին, և ընենք առանց հապաղումի՝ սիհյուռքի գոյատևումի ճիգերը կազմակերպելու և անոր երկունքները նվազ ցավագին ընելու ուղղությամբ: Եվ որպեսզի հույսը ունենանք տրամաբանական հաջողություններու՝ կենսական է որ հարցերը առնենք որպես ամրողություն և անոնց լուծումին ձեռնարկենք խոհմությամբ, հայրենասիրությամբ և ինքնավստահությամբ:

Ես վատահ եմ որ մեր ժողովուրդին դեկավարները՝ հոս թե արտասահման՝ ի վիճակի պիտի ըլլան ճշտորեն կշուղատելու կացություններն ու պահանջմանները, և պիտի ունենան իմաստությունն ու քաջությունը մեր ժողովուրդը առաջնորդելու դեպի իր պապան: Անցնելն ետք դարերու տաժանակից փորձություններն, հաղթելն ետք իր դեմ ցցվող անհաշիվ խոչընդուներուն, և հասնելն ետք իր պատմության այս ամեննեն խոստմնալից և ամեննեն երիտասարդ պահամիշոցին՝ ես վատահ եմ թե մեր ժողովուրդը զրիդություն, ճիգ ու տաղանդ պիտի չխնայե հարթելու իր պատմության ճամփան՝ դեպի պապա:

Ու հիմա չեմ կրնար խոսք ավարտել առանց հրապարակավ իմ որդիական խորունկ մերս, հարգանքս և համարումս հայտնելու մեր պատվական Վեհափառին՝ Ամենայն Հայոց Հայրապետ՝ Վազգեն Առաջին կաթողիկոսին, որուն դերը եղավ կենսականորեն կարեւոր սիհյուռքահայ մեր պատմության այս ճակատագրական շրջանին: Իր խորուն խառնվածքով, իր անսպառ ազըլվությամբ, իր քրիստոնեական անկաշառ ոգիով, իր անսակարկելի հայրենասիրությամբ՝ Ան եղավ այն կեղրունական դեմքը, որուն ուղղվեցան բազում հայվածքներ՝ անկե խորհուրդ, քաջակերանք, ուժ և միսիթարություն ակնկալով:

Ինձի համար քացանիկ պատիկ է՝ այսօր հոս գտնվիլը՝ որպես իր անձնական հյուրը: Ինձի համար անգնահատելի ուժ ու կորով է՝ իրեն հանդեպ



Հին կեչառն. Ներքին Տեսք

իմ անուցած անխառն ակնածանքս, ամբողջական սերս, անխախտելի համարում:

Վեհափառ Հայր, օրինեցեք մեր աշխատանքն ու երազները»:

Հանդիսության ավարտին գոհունակության և օրինության չերմ խոսք և ասում Հայոց Հայրապետը, օրինում ազգն ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովուրդը՝ մաղթելով Մայր Սրբուհին անսասանություն, ինչ եկեղեցուն՝ պայծառություն, հայրենիքին ու ժողովրդին՝ բարօրություն, և աշխարհին՝ խաղաղություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 3-ին, կիրակի օրը, ժամը 15-ին, Վեհարանում կազմակերպվում է պաշտոնական ընդունելություն՝ Վեհափառ Հայրապետի գահակալության առիթով:

Պատվո սեղանի շուրջ, Հայոց Հայրապետի կողքին, տեղ են գրավել՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը, Սիյուռքահայության մետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, տ. Տիրան, տ. Հայկազոն արքեպիսկոպոսները, Վիեննայի Միհիթարյան վանքի նախկին արքահայր տ. Մեսրոպ արքեպ. Հապոյանը, որն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:


Ընդունելությանը ներկա են լինում նաև տեր և տիկին Ալեքս և Մարի Մանուկյանները, տեր և տիկին Էղվարդ-Հելեն Մարտիկյանները, պրոֆ. Տիգ. Փափազյանը, Ստիլըն Մուկարը, Հ. Տերտերյանը, Հայկական բարեգործական ընդհանուր միության Միջին Արևելքի և Հունաստանի տեսուչ Մարտիրոս Խոկեներյանը իր կնոջ հետ (Բեյրութ), Հայկ և Համբարձում Ղազարյան եղբայրները (Միլան), տեր և տիկին Գառնիկ Աղդարյանները (Բեյրութ), Գառնիկ Բագարյանը (Սան-Պավլո), տեր և տիկին Զեկ Ամբեասյանները, Հակոբ Նազողյանը և այլ հյուրեր ԱՄՆ-ից, Կալիֆորնիայից:

Ընդունելությանը ներկա են նաև Գերազում հոգևոր խորհրդի անդամները, տ. Զավեն ծ. Վրդ. Արզումանյանը (ԱՄՆ), տ. Ժիրայր Վրդ. Թաշճյանը (Կանադա), տ. Աղան Վրդ. Բալիոզյանը (Երուսաղեմ), պրն. Հ. ծ. Սիրումին, տեր և տիկին Մովսես-Աղավետի Շլովյանները (Բուխարեստ) և Մայր Աթոռի պաշտոնության ներկայացուցիչներ:

Հրավիրյալների թվում էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը, Սիյուռքահայության մետ մշակութային կապի կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Ա. Մարտիրոսյանը, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի դիրեկտոր, պրոֆ. Լ. Խաչիկյանը, Պետական կենտրոնական արխիվի դիրեկտոր, պրոֆ. Ա. Հարությունյանը, Հայաստանի ճարտարապետների միության նախագահ, պրոֆ. Վ. Հարությունյանը, պրոֆ. Կարո Ղաֆարյանը, Ակարիչ Գրիգոր Խանջյանը, բանաստեղծներ Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, հայագետ, դոկտ. Շուշը (Հովհարիա), լրագրող Ժերար Ստեֆանեսկին (Ֆրանսիա) և ուրիշ հյուրեր:

Սեղանը օրինում է Հայոց Հայրապետը:

Խանդական ու հայրենասիրական մթնոլորտում Վեհափառ Հայրապետին ուղղակա շնորհավորանքի չերմ խոսքեր են արտասանում տ. Հայկազոն



Հին Վեհարան. Անընդհական տեսք

և առ. Տիրան արքեպիսկոպոսները, պրմ. Վարդգես Համազապյանը, պրոֆ. Հ. Շ. Սիրունին, մեջբ Հ. Տերտերյանը:

Պաշտոնական ընդունելությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի գոհարանական աղոթքով:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԾԱՂԿՅԱ ԴԱՀԼԻՇՈՒՄ

Հոկտեմբերի 3-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետի գահակալության 16-րդ տարեդարձի առիթով, ժամը 17-ին, Ն. Ս. Օծության հանդիսադրությամբ, կատարվում է մասնավոր եկեղեցական արարողություն Հին Վեհարանի ծաղկյա դահլիճում:

Հին Վեհարանը շուրջ 300 տարիներ, ժէ դարի 50-ական թվականներից, Փիլիպոս Աղքակեցու օրերից (1633—1654), եղել է մնալուն Հայրապետանց, որ նատել են 29 Հայրապետներ: Այստեղ է նատել նաև իր գահակալության առաջին տարիներին Տ. Տ. Վազգեն Հայրապետը, 1955—1962 թվականներին:

Հին Վեհարանը մայրավանքի պատմական և յորահատուկ կառուցներից մեկն է: Որպես Ամենայն Հայոց Հայրապետի նատոց, Վեհարանը վկան և հանդիսացել մասնավանդ մեր ժողովոյի պատմության վերջին երեք հարյուր տարիների փառավոր, ուրախ և մերթ տիտոր ճակատագրական իրադարձություններին: Հին Վեհարանի այս հարկի տակ է վճռվել հաճախ մեր ժողովոյի պատմական ճակատագիրը:

Անցնող 300 տարիների ընթացքում Հին Վեհարանը ենթարկվել է մի քանի անգամ հիմնական և մասնակի վերանորոգությունների:

Հին Վեհարանի արմատական վերանորոգությունը կատարվում է 1969—1971 թվականներին, Վեհափառ Հայրապետի օրով, Հ. Բ. Ը միության նախագահ Ալեքս Մանուկյանի նվիրատվությամբ:

Ամրացվում են շենքի հիմքերը, Վեհարանն արտաքնապես և ամբողջությամբ երեսպատվում է սրբատաշ քարերով: Վերանորոգության ժամանակ երևան է հանվում Վեհարանի հյուսիսային կողմում հին, 12 աստիճանանց շքամուտքի սանրությունը: Ամրացվում են երկաթ-բետոնով Վեհարանի ներքին աղյուսակերտ և հողաշեն պատերն ու կամարները՝ պահպանելով ներքին տեսքը Վեհարանի: Բնոլորովին ձեռք չի տրվել ծաղկյա դահլիճի Հովհանքանան որմնանկարներին և գեղեցիկ առաստաղին: Հողաշերտից մաքրվել է Վեհարանի առաջին հարկն ու երկան եկել հին, գեղեցիկ կամարակապ գավթը, հին աստիճանատունն ու մյուս սենյակները: Տանիքը ծածկվել է ցինկապատ թիթեղով: Անց է կացվել նաև եկեղեցական լուսավորությունը և կենտրոնական ջեռուցում:

Հոկտեմբերի 3-ին, կիրակի օրը, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով, արև. Ալեքս Մանուկյանի և մյուս հյուրերի ընկերակցությամբ, առաջնորդվում է վերանորոգված Հին Վեհարանի շենքը:

Հանդիսադրությանը ներկա են նաև մասնավոր հրավիրյալ ուխտավորներ:

Տիար Ալեքս Մանուկյանը խանդավառ ծափերի մեջ կտրում է Հին Վեհարանի շքամուտքի կարմիր ծապավենը: Ծքամուտքի ճակատին դրվել է մարմարյա հուշատախտակ վերանորոգության մասին՝ հետևյալ արձանագրությամբ. «Ի հայրապետութեան Տ. Տ. Վազգենի Սուածնոյ Ամենայն Հայոց կաթողիկոսի, յամի Տեառն 1971, ի հիմանէ վերակառուցաւ պատմական Վեհարանս, արդեամբ հարուստ որդուու Մայր Աթոռոյ ամերիկաբնակ Ալեքս Մանուկյանի, ի վայելումն ազգիս հայոց»:

Վեհափառ Հայրապետը, շրջապատված արքեպիսկոպոսներով, եպիսկոպոսներով, Մայր Աթոռի միաբաններով և հյուրերով, առաջնորդվում է

ծաղկյա դահլիճը, որն այս առթիվ ստացել էր դարձյալ իր երբեմնի տեսքը, երբ այնտեղ էր բնակիլում Նորին Ս. Օծությունը:

Մայր Աթոռի սարկավագների խոմը ոգևորությամբ կատարում է «Թագավոր փառաց» շարականը, որպեսզի միշտ «Հնորհազարդ պայծառացի գաւազան իշխանութեան մերոյ հայրապետի» և Աստված լրացնի, ամրողացնի «զպէտս կարեաց Հայատանեայց եկեղեցւոյ»:

S. Ժիրայր Վրդ. Թաշճանը ընթերցում է Մատթեոսի Ավետարանից մի հատված (Մատթ. է 25-27): Ապա Վեհափառ Հայրապետը կարդում է օրվա հանդիսության առթիվ գրված մասնավոր աղոթքը: Հին Վեհարանի ծաղկյա դահլիճն ինչում է խրոխ ու հայրապետան «Ամեն, աղէլուիա»:

Եկեղեցական արարողությունն ավարտվում է հայրապետական «Պահպանիշ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շնորհակալության և օրհնության սրտագին խոսք է ուղղում Հին Վեհարանի վերանորոգության բարերար տիար Ալեքս Մանուկյանին, որն աջահամբուրով շերմ շնորհակալություն և որդիական երախտագիտություն է հայտնում Հայոց Հայրապետին այս պատմական ու բացառիկ հանդիսության համար:

Հին Վեհարանի վերանորոգության առիթով հյուրերին և բոլոր ներկաներին ցուց են տրվում այստեղ ապրած կաթողիկոսների անձնական իրեր, ինչպես նաև սրբաներներ, ընտիր ասեղնագործություններ, շորջառներ, վականներ, խոյրեր, հայրապետական գավազաններ, գորգեր, վարագույններ բոլորը հայկական հին եկեղեցական արվեստի գործեր:

Հին Վեհարանի վերակառուցված շենքը արտաքնապես ներդաշնակություն կազմելով ճարտարապետական առումով Մայր տաճարի արտաքին հառուցի հետ, մայրավանքի շրջափակին հաղորդել է գեղեցկություն, խոյաճ և վեհություն:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ Ս. ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔ

Հոկտեմբերի 4-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, պրն. Ալեքս Մանուկյանը և մյուս հարգելի հյուրերը ուստի են մեկնում դեպի Ա. Գեղարդա վանք:

Ժամը 11.30-ին ս. Գեղարդա վանք է ժամանում նաև Վեհափառ Հայրապետը՝ ընկերակցությամբ տ. Հայկազոն, տ. Տիրան, տ. Մեսրոպ Հապովյան արքապիսկոպոսների, տ. Կոմիտաս, տ. Վահան Եպիսկոպոսների, տ. Զավեն տ. Ժիրայր, տ. Գևորգ Վարդապետների, սարկավագների խմբի:

Ս. Գեղարդա վանքի մեծ դարպասի առաջ Հայոց Հայրապետի ժամանումը դիմավորում և ողջունում է վանահայր տ. Նարեկ Վրդ. Շաքարյանը՝ ի գոլիս միարանության:

Հանդիսավոր ու տոնական հնչում են պատմական վանքի ավետավոր զանգերը: Ի պատիվ Հայոց Հայրապետի աղավաններ են բաց թողնակում:

Վանքի բակում, ուղեգորգերի վրա, Հայոց Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է եկեղեցական արարողություն, աղոթքով ու շարականով, պաշտոնական բացումը ս. Գեղարդա վանքի տաճարի հարավային մասում նորակերտ վանատան, որը կառուցվել է Հ. Բ. Ը. միության նվիրաւությամբ, Ներկարարյան կտակի հաշվին:

Եկեղեցական արարողությունից հետո վանահայր տ. Նարեկ Վրդ. Շաքարյանը մի գեղեցիկ ուղերձով ողջունում է Վեհափառ Հայրապետի շնոր-

հարեր ներկայությունը և բարի գալուստ է մաղթում մեծահարգ հյուրերին՝ համառոտ տեղեկություններ հաղորդելով նաև ս. Գեղարդա վանքի եկեղեցական կառուցների մասին, ծանրանալով մանավանդ վերջին 7—8 տարիների ընթացքում կատարված վանական, շինարարական և վերանորոգչական աշխատանքների վրա:

Այսուհետև Վեհափառ Հայրապետը և Նրան ընկերակցող եկեղեցական և աշխարհական հյուրերի խումբը ուղղվում է դեպի նորակերտ երկիրկանի վանատան երլրորդ հարկի ընդունելության սրահը: Այստեղ ևս տիար Ալեքս Մանուկյանը կտրում է մուտքի ժապավենը և հրավիրում Հայոց Հայրապետին ներս:

Վեհափառ Հայրապետը և բոլոր հյուրերը ուրախությամբ այցելում են ընդունելության գեղեցիկ և լուսավոր սրահը, ապա հարակից սենյակները:

Հայոց Հայրապետը իր շնորհակալության և օրինության խոսքն է ուղղում այստեղ ևս պրե: Ալեքս Մանուկյանին, այն բանի համար, որ Հ. Բ. Ը. միության նվիրատվությամբ կառուցվել է ս. Գեղարդա վանքում միաբանական և ուխտավորական երկիրկանի այս վանատունը:

Նորակերտ վանատան շինարարության մասին հյուրասենյակի ներսում, հյուսիսային մարմարապատ պատի վրա, փորագրվել է հետևյալ արձանագրությունը:

«Ի հայրապետութեան Տ. Տ. Վազգենի Սմենայն Հայոց կաթողիկոսի կառուցաւ վանատուն յամի 1971 արդեամբ Հայ բարեգործական ընդհանուր միութեան, կտական Ներկարարեան, ի վայելուն ազգին հայոց»:

Ապա Վեհափառ Հայրապետը իր բարձր գնահատությանն է արժանացնում ս. Գեղարդա վանքում կատարված շինարարական, վերանորոգչական աշխատանքները թե՛ տաճարից ներս և թե՛ տաճարից դուրս՝ շեշտելով մանավանդ վանահայր տ. Նարեկ վրդ. Շաքարյանի նվիրյալ դեկապար աշխատանքը, հաճախ դժվարին պայմաններում:

Համեստ հյուրասիրությունից հետո, Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ, բոլոր ներկաները այցելում են տաճար, ուր բացատրություններ են տալիս տ. Նարեկ վրդ. Շաքարյանը:

Ս. Գեղարդա վանքի տաճարը և շրջապատը վերանորոգվել են Մայր Աթոռի հարազատ զավակ պրե: Էղվարդ Մարտիկյանի նվիրատվությամբ: Այս առթիվ Մայր Աթոռի բարերարն ինքնարուիս կերպով մի նոր նվիրատվությամբ հանձն է առնում նաև հոգալ տաճարի տանիքի քարապատման և վանքի պայծառության ու բարեկարգման հետ կապված հետագա ծախսերը:

Ս. Գեղարդա վանքի նորոգության առիթով վանքի բակում, հարավային պատի վրա, դրված է մարմարակերտ հուշատախտակ՝ հետևյալ արձանագրությամբ:

«Ի հայրապետութեան Տ. Տ. Վազգենի Սմենայն Հայոց կաթողիկոսի յամի 1965—1971 վերանորոգեալ պայծառացաւ սուրբ տաճարս այս, հանդերձ շրջապատիքն արդեամբ ամերիկանակ Էղվարդ Մարտիկեանի, հարազատ որդույ Մայր Աթոռոյ, ի վայելուն ազգին հայոց»:

Ավելի քան երեք ժամ հյուրերը անցկացնում են ս. Գեղարդա պատմական վանքում, կատարում են իրենց աղոթքն ու ուխտը և ժամը 15-ին վերադառնում Երևան՝ լավագույն տպավորություններով:

Վերջին 7—8 տարիներին ս. Գեղարդա վանքում կատարվել են բավական ընդարձակ շինարարական, վերանորոգչական աշխատանքներ: Կառուց-

վել է հաստ և ամուր շորջ 50 մետրանոց քարաշեն պատ, փող եկող լեռան դիմաց: Բարեկարգվել են և վերաշինվել վանքի մեծ շքամուտքը, ճանապարհը և նոր մատաղատուն տանող ճանապարհը: Կառուցվել է նոր մատաղատուն՝ իր շրով և կոյուղիով: Տաճակ խորանարդ մետրերով հողային աշխատանքներ են կատարվել, շինվել են հարթակ-հրապարակներ ուստավորենիք համար: Հիմնովին վերանորոգվել են վանական սեղանատունն ու խօսքարդը, վանքի հին և պատմական պարիսպների մեծ մասը: Վերաշարվել և ամրացվել են տեղաշարժված երեսպատերի բազում քարեր, վերանորոգվել հշամավոր անձանց դամբարանները, տեղադրվել խաչքարեր: Տաճարից ներս վերանորոգվել և բարեկարգվել են ավանդատունները, խորանները, վանքում թերվել է էլեկտրական հոսանք՝ երեք կիլոմետր հեռավորությունից, տեղադրվել է կենտրոնական չեռուցում և այլն:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ. Բ. Ը. միության նախագահ տիկիր Ալեքս Մանուկյանը և նրան ընկերակցող հարգելի հյուրերը և էջմիածնում և մայր հայրենիքում գտնված օրենին այցելում են պատմական այլ վանքեր և եկեղեցիներ, այդ թվում Օշականի և Մեսրոպի գերեզմանն ու դամբարանը՝ իրենց երկյուղած լուսի հարգանքը մատուցելու մեծ Տարոնացուն, դիտում են մայրաքաղաքի տեսարժան վայրերն ու հուշարձանները, այցելուն են և Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, որը մեծ հիացմունքով ծանոթանում են հայ մշակույթի և արվեստի անկրկնելի գանձերին, Ծիծեռնակարերդում՝ հայ նահատակաց հուշարձան, ապա Էրեբունի, Ծողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդես, Բյուրականի աստղադիտարան և պետական կենտրոնական արխիվ, Երևանի էլեկտրագործարան, պետական համալսարան, պատմության թանգարան, Սարդարապատի հուշարձանախումբ։ Հյուրերը նաև ավագության մեծարում են Վարպետին՝ Մարտիրոս Սարյանին, նորա աշխատանոց-տանը։

Հոկտեմբերի 4-ին, երկուշաբթի օրը, ժամը 10-ին, հյուրերին ընդունում է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազապայանը, որը շերմորեն ողջունում է նրանց՝ բարձր գնահատելով այն ծավալուն աշխատանքը, որը կատարում է Հ. Բ. Ը. Միությունը հայապահպանման գործում:

Հոկտեմբերի թ-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, պր. Սլեքս Մանուկյանին ու նրան ընկերակցող անձանց ընդունում է Երևանի քաղաքային սովունի գործկումի նախագահ Գրիգոր Հասրաթյանը, որը քարի զայտատ է մայորում մեծահարգ հյուրերին և նրանց խոտամ մեր հանրապետության հվաճումների՝ տնտեսության, գյուղության, արվեստի, մշակույթի քնարավառություն և ապագայում մեծ հեռանկարների մասին:

Նոյն օրը, ժամը 18-ին, հյուրերն այցելում են Զվարթնոց և ապա Աղիկսիմետի, ս. Գալանելի վանքեր:

ԱՅՑ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

Երեկոյան ժամը 18-ին հյուրերն այցելում են հոգևոր ճեմարան, որ տեսակ առ Հովհաննես քին. Մարուքյանը, հանուն դասախոսական կազմի և ուսանողության, սրտագին, շերմ ուղերձով ողջունում է հյուրերի ճենեկառությունը:



Հին Վեհարանի նախասրան

Այ և համառոտակի խոսում ճեմարանի նպատակի և ճշանակության, ուսումնական ծրագրի, աշակերտության թվի և ուսանողության առօրյայի մասին:

Պրն. Ալեքս Մանուկյանը խոսք առնելով շեշտում է ճեմարանի կատարած և կատարելիք մեծ դերը հայ եկեղեցու զորացման և պայծառացման գործում, թելադրում ուսանողությանը լինել հավատքի և գիտության մարդիկ, որոնց առաջ միշտ բաց լինեն հետագայում համալսարանական մասնագի-

տական-եկեղեցական դաստիարակության դրսերը, եթե հավատարիմ մնան իրենց կոչմանը և առաքելությանը:

Հոգևոր ճեմարանի ուսանողական երգչախումբը կատարում է մի շարք հոգևոր և ազգային-հայրենասիրական երգեր: Ուսանողներից ոմանք հանդես են գալիս արտասանություններով:

Հոկտեմբերի 7—8 օրերին հյուրերն այցելում են Սևան, Դիլիջան, Հաղպատի վանք, Կիրովական, որ հրանց պատվիճ քաղաքային իշխանությունը ճաշկերությունը է կազմակերպում «Կիրովական» ճաշարանում:
Կիրովականում այցելում են արհեստական մետաքսաթել պատրաստող գործարան:

Հյուրերը ամսի 8-ին Դիլիջանի մոտ, Գորովինոյում, գիշերում են «Լեռնային Հայաստան» առողջարանում:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Վեհափառ Հայրապետի գահակալության 16-րդ տարեդարձի առթիվ սույն թվականի հոկտեմբերի 6—9 օրերին հոգևոր ճեմարանի հարկի տակ կարդացվեցին կրոնական-ծիսագիտական, բարոյական ու հայրենասիրական թեմաների շուրջ հետևյալ դասախոսությունները.

ա) «Կրոնական շարժման նկարագրությունները» (Ուսուերտառնի հայոց և Հակոբ եկեղեցու հոգևոր հովիկ տ. Տաճատ քին. Դավթյան).

բ) «Խաղաղությունը ըստ Ավետարանի» (Ս. Գեղարդա վանքի վանապահ տ. Նարեկ Վլդ. Շաքարյան).

գ) «Գրիգոր Նարեկացին մեր օրերին» (Հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քին. Մարտիրյան).

դ) «Էկումենիկ շարժման մասին» (Ֆիլադելֆիայի և Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիկ տ. Զավեն ծ. Վլդ. Արզումանյան).

ե) «Մարդու հարությունը որպես կենսահաստատ փիլիսոփայություն Ավետարանի մեջ» (Երևանի և Սարգսի եկեղեցու տ. Ռուբեն քին. Մարտիրյան).

զ) «Հայ եկեղեցական երաժշտությունը» (Մայր Աթոռի միաբանության անդամ Արարատ սրբ. Գալստյան):

Դասախոսություններին ներկա են լինում տ. Հայկազոն, տ. Հովհիկ, տ. Կոմիտաս սրբազնները, ուստավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Տիրան արքեպ. Ներսոյանը, տ. Աղան արեղա Բալիովյանը, տ. Ժիրայր Վլդ. Թաշճյանը, հայրենիքի և ներքին թեմերի թեմակալ առաջնորդները, մոտ 45 քահանա հայրեր, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը:

ՀՅՈՒՐԵՐԸ ՀՐԱԺԵԾ ԵՆ ԱՌԵՌԻՄ

Հոկտեմբերի 10-ին, Կիրակի:

Մայր տաճարում պաշտվում է ս. պատարագ: Մայր տաճարը լիքն է հավատավոր բազմությամբ:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Մայր տաճար՝ շրջապատված ամերիկահայ բազում ուստավորներով, որոնց թվում են տեղ և տիկին Ալեքս-Մարի Մանոկյանները, տեղ և տիկին Էդվարդ-Հեղինե Մարտիկյանները, պրն. Ստիվըն Մուկարը և ուրիշներ:



Ա. ԳԵՂԱՐՔԻ ՎԱՆԻ ՆՈՐԱԿԱՊՈՅԹ ՎԱՆԱԿԱՆ ԾՄԱԲԻ ԲԱՑՈՒՄԸ

Ս. պատարագը մատուցում է ովհատավորաբար Մայր Աթոռում գտնվող, Ֆիլադելֆիայի հայոց և Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ տ. Զավեն ծ. Վրդ. Արքումանանը և քարոզում «Հայր մեր»-ի ժամանակ «Եւ զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօք իրօք» շարականի բնարանով:

Հավարտ ս. պատարագի Վեհարանի սեղանատանը, ի պատիվ պրն. Ալեքս Մանուկյանի և նրան ընկերակցող հյուր-ովհատավորների, տրվում է հրամեատի ճաշկերութ, որին Աերկա են լինում տ. Հայկազուն, տ. Տիրան, տ. Կոմիտաս սրբազնները, ովհատավորաբար Մայր Աթոռում գտնվող Ուուերտառունի հոգևոր հովիվ տ. Տաճատ քնն. Դավթյանը, Հ. Բ. Ը. միության Միջն Արևելքի և Հունաստանի տեսուչ պրն. Հովհաննես Խակենդերյանը՝ իր հարգելի տիկնոց հետ, պրոֆ. Հ. Ը. Սիրունին, լրագրող Ժիրայր Ստեֆանեան, տեր և տիկին Մովսես-Աղավետի Ծովոյանները՝ Բուխարեատից, դիվանապետ Հայկ Առաքելյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հասիտյանը:

Հյուրերի թվում էին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը՝ իր հարգելի տիկնոց հետ:

Սեղանը օրինում է Վեհափառ Հայրապետը: Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը առաջին բաժակն առաջարկում է խմել Հայոց Հայրապետի կենաց:

Ն. Ս. Օծությունը խոսր առնելով կրկին անգամ ողջունում է Աերկայությունը հարգարժան հյուրերի լավագույն բարեմաղթություններով և մասնակոր կերպով շեշտում, որ Ինքը թե՛ կոնդակներով և թե՛ կենդանի խոսքով միշտ արտահայտել է հայրապետական Իր խորը զգացմունքները և տվել Իր օրինությունը Հ. Բ. Ը. միության դեկապարներին և աղոթել նրա կրթանվեր ու հայրենասիրական ձեռնարկների հաջողության համար:

«Մենք,—շեշտում է Նորին Ս. Օծությունը,—որպես Հայոց Հայրապետ տևապես ապրում ենք մեր ժողովրդի ճակատագրի հետ կապված բազում հարցերը: Եվ այստեղ նատած, և Էջմիածնի մազ, հայրենի հողի վրա, Մենք ավելի ճիշտ և հատկ կարողանում ենք տեսնել այդ հարցերի բնույթը և կարևորությունը, մնալով միշտ համար կերպով լավատես, թեն չենք ստորագրեահատում մեր բազում դժվարությունները: Մենք խորապես ապրում ենք զգացումը՝ մեր ժողովրդի անցյալում կրած ողբերգությունների և միաժամանակ զգացումը ու գիտակցությունը մեր հոգևոր, ազգային ու հայրենական վերածննդյան: Ամեն բանից վեր ենք գնահատում՝ մեր ժողովրդի ազգային առողջ բնազդը, ապրելո, տոկալո կիրքը, ստեղծարար ոգին»:

Ալեքսեևն Վեհափառ Հայրապետը ծանրանում է ափյուռքում մեր ազգային-եկեղեցական կյանքում մերթ ընել մերթ երևան եկող կենտրոնախուզ Երևությունների վրա, որոնք խանգարում են հայ ժողովրդի և մեր եկեղեցու այսօրվա պատմական երթը: Ն. Ս. Օծությունը այդ պատմական երթի ճանապարհի վրա ամենայն կարևորությամբ վեր է հանում Հ. Բ. Ը. միության կատարած նախախնամական դերը ափյուռքի մեր ազգային-եկեղեցական, մշակութային ու հայրենասիրական կյանքում որպես դրական երևույթ՝ շնորհիվ նրա ազգասեր, կրթանվեր, հայրենասեր ու հավատավոր դեկապարների աշխատանքների, որոնցից են մեր օրերին պրն. Ալեքս Մանուկյանը, Էդվարդ Մարտիրիկյանը և ուրիշներ:

«Մենք,—եզրակացնում է Նորին Սրբությունը,—որպես Հայոց Հայրապետ, միշտ Մեր օրինությունը պիտի բերենք համազային այս մեծ հաստա-

տությանը, նեցուկ պիտի լինենք նրան և գործակցենք նրա հետ կրթանվեր, եկեղեցաշեն, և հայապահպան շնորհակալ նրա աշխատանքներին, որովհետև մեր բոլորիս հիմնական ու գերազում նպատակն է պահել հայ ժողովրդի նոգեսր, մշակութային ու հայունասիրական միությունն ու միասնականությունը: Մեր օրինությունը ձեզի, պրն. Ալեքս Մանուկյան, ձեր գործակիցներին և Հ. Բ. Ը. միության բոլոր անդամներին: Ս. Էջմիածինը ձեզ հետ եղել է, և և կինդի միշտ առաջնորդված հայ եկեղեցու, հայ ժողովրդի և մայր հայրենիքի գերագույն շամերից:

Ընդունելության ժամանակ թանկագին հյուրերին ողջունում և բարի ողջերը է մաղթում ՀՍՍՀ Մինիստրների տովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը՝ վեր հանելով Հ. Բ. Ը. միու-



Հին Վեհարան. առաջին հարկի նորարար կամարները

թյան կատարած կրթանվեր ու հայունասիրական գործունեությունը ակյուրում և նրա բերած բարոյական ու հյութական աշակցությունը 1920-ական թվականներից սկսած, հայրենիքի առաջնորդացքին ու վերելքին:

Հայոց Հայրապետին ուղղակ որդիական երախտագիտության և շնորհակալության սրտագին խոսքեր են ասում իրենց ընծայված ուխտավորական այս բացառիկ առիթի և հայրենական անմոռաց ապրումների համար պրն. Ալեքս Մանուկյանը, պրն. Էղվարդ Մարտիկյանը, պրն. Հ. Տերտերյանը, պրն. Ստիվըն Մուկարը:

Ընդունելության ժամանակ շերմ եղույթներ են ունենում տ. Հայկագուն տ. Տիրան արքեպիսկոպոսները, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող պրն. Հովհաննես Խակենդերյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանը:

Արմենական պատմության և գործակալության պահպանի գործությունները



Ողջերթի սեղանը փակում է Վեհափառ Հայրապետի օրինությամբ և աղոթքով:

Երեկոյան ժամը 19-ին հյուրերը Երևանում, Հայֆիլիարմոնիայի համերգային մեծ դահլիճում, ներկա են լինում Կոմիտաս վարդապետի հիշատակին նվիրված գրական-երաժշտական երեկոյին:

Հոկտեմբերի 11-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 9-ին, տեր և տիկին Էնվարդ-Հեղինե Մարտիկյանները, պրն. Ստիվըն Մուկարը և պրն. Հ. Տերտերյանը, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից, մեկնում են լավագոյն և անմոռաց տպավորություններով ու հուշերով:

Հոկտեմբերի 12-ին, երեքշաբթի օրը, տիար Ալեքս Մանուկյանը, տ. Հովհաննեսկոպոսի ընկերակցությամբ, այցելում է «Էջմիածին» ամսագրի խրմագրություն, Մայր Աթոռի տպարան, դիվանատուն, տնտեսական ու ֆինանսական բաժիններ և արհեստանոցները:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՈՒԵՐԻ ՍՈՎԵՏՈՒՄ

Հոկտեմբերի 14-ին, հինգշաբթի օրը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բաղդալ Մուրադյանը ընդունում է Հ. Բ. Ը. միության նախագահ տիար Ալեքս Մանուկյանին, որին ընկերակցում էր Միչիգանի (Ա.Ս'ն) համալսարանի պրոֆեսոր Տիգրան Փափազյանը:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի և Հ. Բ. Ը. միության նախագահի միջև տեղի է ունենում ջերմ գրուց, որի ընթացքում Բաղդալ Մուրադյանը վեր է հանում Հ. Բ. Ը. միության սիյուուրում ծավալած հայրենասիրական, մշակութային շնորհակալ գործունեությունը՝ տիար Ալեքս Մանուկյանի ղեկավարությամբ:

Զրուցին, որն անցնում է սրտագիտ մթնոլորտում, մասնակցում են նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Լ. Ա. Սոնիկանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդու և Սիյուուրահայության հետ մշակութային կապի կոմիտեն ողջերթի ընդունելություն են կազմակերպում ի պատիվ տեր և տիկին Ալեքս-Մայր Մանուկյանների:

ՈՂՋԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ

Հ. Բ. Ը. ՄԻՆԻԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Հոկտեմբերի 15-ին, ուրբաթ օրը, ժամը 16-ին, Երևանում, «Արմենիա» հյուրանոցի ճաշարանի փոքր դահլիճում, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդու և Սիյուուրահայության հետ մշակութային կապի կոմիտեն ողջերթի ընդունելություն են կազմակերպում ի պատիվ տեր և տիկին Ալեքս-Մայր Մանուկյանների:

Ողջերթի ընդունելությանը ներկա է լինում Հայոց Հայրապետը՝ ընկերակցությամբ տ. Հայկազուն և տ. Տիգրան արքեպիսկոպոսների, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանի և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Պարգև Շահրապահնի:

Ընդունելությանը ներկա են՝ ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Սարգսի Գասպարյանը իր հարգելի կնոջ հետ, նախագահի տեղակալ Ս. Հովհաննիանը, Սիյուուրահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ տիար Վարդգես Համազապյանը իր հարգելի կնոջ հետ, նախագահի տեղակալներ Մ. Մելքոնյա-

Յը, Ա. Մարտիրոսյանը, Պ. Մարտիրոսյանը և ուրիշներ:

Հրավիրյալների թվում էին Հայաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախագահ Աշոտ Աղանյանը, Երևանի պետական համապարանի ռեկտոր, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը, և Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի դիրեկտոր, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը, պետական կենտրոնական արխիվի դիրեկտոր, պրոֆ. Աշոտ Հարությունյանը, Հայաստանի ճարտարապետների միության նախագահ, պրոֆ. Վ. Հարությունյանը, բանաստեղծության Սիլվա Կապոտիկյանը, Մարտ Մարգարյանը, նկարիչ Գրիգոր Խանջյանը, երգչության Լուսինն Զաքարյանը, դոցենտ Գևորգ Խոլորյանը, Հայաստանի տուրիզմի վարչության պետ Ի. Գևորգովը, «Արմենիա» հյուրանոցի դիրեկտոր Ս. Զաքարյանը:

Արտասահմանյան հյուրերից ներկա էն ողջերթի ընդունելության՝ սիրված գորդ Վահրամ Մալյանը (Լիսարոն), Գառնիկ Բազարյանը (Սան-Պավլո), նկարիչ Մութաֆյանը (Փարիզ), տեր և տիկին Արշակ Տիգրանյանները (Լու-Անժելոն), Մուշեղ Շիրճյանը (Մոնակո), լրագրող օր. Ռոզա Մահյանը (Բուենոս-Այրես) և ուրիշներ:

Ողջերթի սեղանը նեկավարում է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը:

Հանուն բոլոր ներկաների ՀՍՍՀ Մինիստրների սովունին առընթեր հայեկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը շնորհավորում է Հայոց Հայրապետի գահակալության 16-րդ տարեդարձը: Բոլոր ներկաները հունվարյան բաժակ են բարձրացնում Հայոց Հայրապետի կենաց՝ նրա հետագա եկեղեցաշեն, հայրենանվեր ու խաղաղափրական գործունեության բարեմաղյություններով:

Տիար Ալեքս Մանուկյանին շերմ ողջերթ են մաղթում Վ. Համազասպյանը, Աշոտ Աղանյանը, Սիլվա Կապոտիկյանը, Գրիգոր Խանջյանը՝ վեր հանելով Հ. Բ. Ը. միության կատարած հայրենասիրական, մշակութային, հայապահանման մեծ և շնորհակալ աշխատանքը սփյուռքի պայմաններում, մանավանդ վերջին քսան տարիների ընթացքում, երբ այդ համագոգային կազմակերպության գլուխ էր կանգնել մեր հարգելի հյուրը:

Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս օրենում է անունն ու գործը տիար Ալեքս Մանուկյանի, որպես Հ. Բ. Ը. միության նախագահի, որպես Մայր Աթոռուի հարազատ ու հավատավոր գավակի, ազնիվ ու հայրենասեր հայ մարդու:

Ընդունելության վերջում շնորհակալության և երախտագիտության զգացված խոսք է ասում տիար Ալեքս Մանուկյանը.

ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ

«Վեհափառ Տեր,
Պրն. Գասպարյան,
Պրն. Համազասպյան,

Պաշտոնիս և աշխատանքներու բերումով՝ պատեհությունը ունեցած են անձամբ ճանշնալու և հյուրասիրությունը վայելելու պետական բարձրագույն առաջնորդներու և պաշտոնատարներու բայց տարբե՛ր է այսօր. տարբե՛ր են այսօր զգացումներս և ապրումներս, տարբե՛ր՝ իրենց թե՛ սաստկությամբ և թե՛ բնույթով:

Այսօր, ես, առաջին անգամ ըլլալով դեմ հանդիման կգտնվիմ իմ նախարարության հարազատ հայրենիքին՝ Հայաստանի պետության դեկանալու:

ներուն, պետության մը՝ որ վեց դարերու ստրկության խավարակուու շրջանն մը ետք՝ առավոտ մը՝ հրաշքի պես կանգնեցավ մեր ամերակ հողերուն մեկ բեկորին վրա, և անկե ի վեր կապրի ու կգորանա, կգեղեցկանա՛ ու կքաղցրանա բոլորին համար:

Հին, բայց երիտասարդ, հալածված ու չարչարված՝ բայց անխորտակելի՛, փոքր՝ բայց տաղանդաշա՞ւ ժողովուրդի մը դարավոր երազներուն ծաղկումին դեմ հանդիման կգունվիմ այսօր, ժողովուրդի մը, որուն համեստ ու հավատարիմ մեկ զավակը ըլլալու ուրախությունն ու հպարտությունը ունիմ:

Հայրենիք ու պետականություն ունենալու իրողությունը կենսական հայապայմանն է ժողովուրդի մը՝ որպես ժողովուրդ գոյության: Սուանց հայրենիքի և առանց սեփական պետության՝ կարելի չէ բայլ պահել ժամանակին նետ, և մասնակցել պատմության հառաջդիմության, դասլիլ մարդկությունը կազմող ազգություններու շարքին: Դուք՝ պետական մարդկոր, և ձեր այն կորովի հախորդները, որոնք միմը դրին մեր նոր պետականության՝ մեր ժողովուրդին մատուցիք ծառայություն մը, որ էականորեն թանձագին է, որ կարևոր է մեր գոյության իսկ չափ: Դուք մարդկային պատմության հունին մեջ մտցուցիք մեր ժողովուրդը, որ երկար դարեր վարած էր լուսանցքային կյանք մը միայն՝ ապրելով մարդկային պատմության մայր ճանապարհուն դուրս, անոր եզերքներուն վրա: Դուք վերականգնեցիք մեր ժողովուրդը, անոր տվիք ներկային և քաղաքական իմքնությունն, դուք մեզ անցյալեն ներկային բերիք, ապագային գողեցիք մեզ: Եսկ այսօր, երբ ճամփա ելած է մեր ժողովուրդը դեպի իր ապագան՝ ձեր դերը ավելի ևս կարևոր է, ավելի ևս սրբազն: Դուք եք հավաքետները մեր ժողովուրդին, և անոր ճակատագրին նավը դուք պիտի վարեք՝ ներկայի ալեկոծ օրերուն մեջեն՝ դեպի ապահով հավահանգիստներ: Մեր բախտին դեկը ձեր ձեռքերուն մեջ է գլխավորաբար, բախտ մը որ հին է մարդկային պատմության չափ, բախտ մը որ եղած է զարմանայի՝ որնէ հրաշքի չափ, բախտ մը որ հաճախ խոժող եղած է ու նույնիսկ անգույք: Սուակելաբար դուք եք որ պիտի կարենաք մոտեն մասնակցիլ այդ բախտին կրելիք փոփոխություններուն ներկային և գալիք օրերուն: Բոլորս ձեզի կնայինք ակնկալությամբ, հույսով, սերով, խնդրանքով և հպատաքով:

Որպես արտասահման բնակող հայ՝ կուգեմ իմ գնահատանքս ու շնորհակալությունս հայտնել պես: Համազասպալահի գլխավորած Մշակութային կապի կոմիտեին, այն մշակութային օգնության և քաջալերանքի համար, որոնք ցուց կտրվին Հայաստանին կողմէ՝ արտասահմանի: Կզգանք թե անտեր չենք այլս. կզգանք թե պատահական զանգվածներ չենք այլս. կզգանք թե ո՞չ միայն անցյալ՝ այն ներկա՝ ունինք, ներկա մը՝ որմով կարմնորվի անցյալը, կլուսավորվի, մագաղաթներեն և հնամենի տումարներեն ու գիրքերեն դուրս կուգա՝ շնչելու համար և ապրելու ազատորեն:

Հպարտ ենք Հայաստանի մեջ իրագործված գիտական հառաջդիմությամբ՝ այդ ըլլա զուտ գիտության մարզին թե հայկաբանության և այլ իմացական ուսմանց կալվածին մեջ: Մեր գիտնականները հայուն անոնք աշխարհ տարին, և պատիկ Հայաստանը վերածեցին մեծ ու արդիական կեդրոնի մը: Գիտության ալս դարուն մեջ՝ Հայաստանը գիտականացուցին:

Նույնքան նկատառելի է նաև Հայաստանի հայկաբաններուն նվաճումները: Անոնք վերակենդանացուցին մեր անցյալն ու անոր արժեքները, նոր փայլ տվին մեր ժողովուրդին անցյալին՝ զայն ազատելով անորոշություններեն, ցուց

տպով մեր մշակույթին և ընկերային հերդրումներուն տեղը՝ համաշխարհային պատմության մեջ:

Ուրախության բացառիկ առիթ մըն է նաև մեր սուրբ Էջմիածնին վայելած պաշտպանությունն ու ազատությունները Հայաստանի մեջ: Գիտեք՝ Էջմիածնը անշափելիորեն թանկագին է մեզի համար: Ան դարերով եղած է մեզ մեր ազգության կապող գլխավոր բնեուներեն մեկը, և այսօր տակալին է: Մեր հավատքը, մեր եկեղեցին՝ որուն մարմնացումն է սուրբ Էջմիածնին և հզորագույն ազդակներեն մեկը արտասահմանի գաղութները իրարու կապող մեր անցյալին ու ներկային: Ու պետք է խորին գոհունակությամբ հաստատել՝ թե ներկայությունը Էջմիածնի գամին վրա Վազգեն Վեհափառին նման հայրենաւեր ու իմաստուն գահակալի մը՝ իսկական բախտավորություն մըն է: Մեր պատմության վերջին ճակատագրական այս շրջանին՝ ան գիտցավ քաջույամբ կատարել իր պարտականությունները՝ որպես առաջնորդ և հովվակելու: Եվ մենք արտասահմանի հայերս շնորհապարտ ենք իրեն:

Արտասահմանը ընդարձակ աշխարհ մըն է և կուրածվի բազմաթիվ և բազմապիսի երկինքներու տակ: Բայց որքան ալ ըլլա տարտղնված, որքան ալ ունենա ազգապահպանում լորդ դժվարություններ մանավանդ կարգ մը գաղութներու մեջ՝ դարձալ ալ կներկայացնե մեծ ուժ մը՝ որպես ընկերային և մշակութային գործոն: Ազգային գգացումի, մշակութային-գեղարվեստական կարելիություններու և նյութական հավանականություններու տեսակետեն՝ ճակատագրի շտեմարան մըն է ափյուռքը, և այդպես պիտի մնա հավանաբար տասնամյակներ ամրող՝ շնորհիվ մեզ հյուրընկալող պետություններուն և ժողովուրդներուն մեզի ընձեռած ազատություններուն, դյուրություններուն, առավելություններուն, մեզ հանդեպ ցույց տված հոգածության և գնահատանքին: Այսուհետեր՝ ժամանակը հիմնական ազդակ մըն է մեզի համար, և անհրաժեշտ է որ արագությունը ըլլա առաջնակարգ հատկանիշներեն մեկը մեր աշխատանքներուն և ծրագիրներուն: Ժամանակին դեմ է որ կքալենք մենք ափյուռքի մեջ:

Կվերջացնեմ խորս՝ անգամ մը ևս շնորհակալությունն և երախտագիտությունն հայտնելով մեր միրելի Հայաստանի ժողովուրդին, պետության, դեկապահնության մեջ հանդեպ ցույց տված հոգածության և գնահատանքին: Այսուհետեր՝ ժամանակը հիմնական ազդակ մըն է մեզի համար, և անհրաժեշտ է որ արագությունը ըլլա առաջնակարգ հատկանիշներեն մեկը մեր աշխատանքներուն և ծրագիրներուն: Ժամանակին դեմ է որ կքալենք մենք ափյուռքի մեջ:

Կնաղթեմ որ մեր ժողովուրդին կյանքի ճամփան, որ նոր թեքումով մը միացած է աշխարհի ժողովուրդներու երթի ճանապարհին՝ հաստատ ու ինքնավտան շարունակվի դեպի ապագա:

Կհավատամ թե պիտի շարունակվի»:

ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՀՐԱԺԵԾ Է ԱՌՆՈՒՄ Ս. Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ւ

Հոկտեմբերի 16-ին, շաբաթ օրը, առավույան ժամը 9-ին, տիար Ալեքս Մանուկյանը հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից և մայր հայրենիքից և մեկնում իր հարգելի կնոջ՝ տիկին Մարի Մանուկյանի հետ, անմոռաց հոյշերով և տպավորություններով:

Երևանի օդանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, տեղ և տիկին Ալեքս-Մարի Մանուկյաններին բարի ճանապարհ է մաղթում տ. Հայկագուն արքեպ. Աքրահամյանը:

Հայոց պատմության պահուղության պարզաբանութեան համար



Տիար Ալեքս Մանուկյանին ճանապարհում են նաև ՀՍՍՀ Մինիստրութիւնի սպէստին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Սարգսի Գաապարյանը, Սփյուռքահայության նետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազապյանը և այլ պաշտոնական անձինք:

Մայր Աթոռում և հայրենիքում տիար Ալեքս Մանուկյանի ուխտավորության օրերն անցնում են համեմի, բովանդակալից և հետաքրքիր, եկեղեցական ու հայրենասիրական խորը ապրումներով, անմոռանալի տպավորություններով:

